Հավելված
Բյուրեղավան համայնքի ավագանու
2018 թվականի հուլիսի 4-ի թիվ 47-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) համայնքային ծառայողներին տրամադրվող հավելավճարների կարգը և չափը:

2.Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառել մեկ ընդհանուր հավելավճար՝ 5 (հինգ) տոկոսի չափով:

3.Համայնքային ծառայության բնագավառում Աշխատակազմի համայնքային ծառայողների՝ Աշխատակազմում ունեցած երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժի համար կիրառել հավելավճար՝ պաշտոնային դրույքաչափի նկատմամբ՝ հետևյալ սանդղակով.

Աշխատակազմում համայնքային ծառայողի աշխատանքային ստաժը՝	մինչև 5 տարի	5-10 տարի	10-15 տարի	15 և ավելի տարիներ
Պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի չափը (պաշտոնային դրույքաչափի նկատմամբ %-ով)	0	5	10	15